













1990 թ. ապրիլի 24-ի խորհուրդը լա-  
ւազոյնս բնորոշող բանաձևեր, սակայն,  
անկախութեան պայքարի նուիրեալ: նա-  
խիջեւանեան սահմանային կռիւներում  
նահատակուած ԱԽՄ-ական Մովսէս Գոր-  
գիսեանի պատգամի բնոյթ ունեցող հա-  
յերէն եւ անգլերէն տարբերակներով ա-  
սոյթն էր՝ «Սուգը հավերժ է, երբ պայքար  
չկա» (նկ. 26, 27, 28), "Sorrow is forever, if  
there is no struggle" (նկ. 29):

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- 1 Տե՛ս մասնատրապէս՝ Յարութիւն Մարութեան, *Հայ պոեզիան որպէս ինքնուրուի պատկերա-  
գրութիւն (ըստ Հարաբաղեան շարժման ցե-  
ղասպանութեանը նուիրուած ցուցաստատու-  
ման)*, «Հայկազեան հայագիտական հանդէս»,  
2000, հտ. Ի, էջ 270:
- 2 Բնագրում շեշտադրում ունի միայն «գարթի»  
բառը: Տե՛ս *Հայ ժողովրդական ռազմի եւ զին-  
ուորի երգեր* (աշխ.՝ Ա. Ս. Ղազիւեանի), Երե-  
ւան, 1989, էջ 146-148:
- 3 Թերեւս պատահական չէ, որ նորագոյն ժամա-  
նակների ֆիդայական առաջին ջոկատներից  
մէկը կոչուում էր «Արարո»:
- 4 Տե՛ս *Հայ ժողովրդական ռազմի եւ զինուորի եր-  
գեր*, էջ 33-34, 146-148, 302-303:
- 5 Հմմտ. «Համազում եմք, որ միայն գեներով կա  
հային փրկութիւն» սոսիի հետ «Մեք անկեղծ  
զինվոր եմք առանձին վիճակ» դեռեւս 70 տարի  
առաջ լայն տարածում ունեցող երգից: Տե՛ս *Հայ  
ժողովրդական ռազմի եւ զինուորի երգեր*, էջ  
116, 292:
- 6 Հմմտ. Կանչ, թիւ 1, 1992:
- 7 Մանրամասն տե՛ս Գարեգին Նժդեհ, *Հատըն-  
տիր*, Երեւան, 2001:
- 8 Տե՛ս Գարեգին Նժդեհ, *Ինչո՞ւ ստեղծուեց Յե-  
ղակոսը շարժումը*.- Գարեգին Նժդեհ. Հատըն-  
տիր, էջ 313:
- 9 Անդ, էջ 315:
- 10 Գարեգին Նժդեհ, *Յեղակոսութիւնը իբր յաղ-  
թանակի զօրոյթ*.- Գարեգին Նժդեհ. Հատըն-  
տիր, էջ 316:
- 11 Տե՛ս Հրաչեայ Աճառեան, *Հայոց անձնանուն-  
ների բառարան*, հտ. Գ, Երեւան, 1946, էջ 271:
- 12 Ազգային միացեալ կուսակցութիւնը (ԱՄԿ)  
ստեղծուել է 1966 թ. ապրիլի 24-ին, իսկ մէկ  
տարի անց կազմուել է ԱՄԿ-ի ծրագիրը եւ կա-  
նոնադրութիւնը: 1974 թ. ծրագիրը վերախմ-  
բագրուել է, սակայն հիմնական հարցերում այն  
մնացել է նոյնը: Մասնատրապէս յօսքը վերա-  
բերում է գլխաւոր նպատակներին, այն է՝ Հայ-  
կական հարցի լուծումը Հայաստանի անկա-  
խացման, տարածական վերամիաւորման եւ

- մայր հայրենիքում աշխարհասփիտ հայութեան  
համախմբման ճանապարհով: 1987 թ. հոկտեմ-  
բերին ԱՄԿ-ն վերանուանուել է Ազգային ինք-  
նորոշում միաւորման (ԱԽՄ): Մանրամասն  
տե՛ս Պարոյր Հայրիկեան, *Ազգային միացեալ  
կուսակցութիւն. ծրագիր-կանոնադրութիւն եւ  
պարագայք*, Երեւան, 1991:
- 13 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. VI, Երե-  
ւան, 1981, էջ 284-285:
- 14 Տե՛ս Արսէն Կեռնիկեան, *Վասպուրականի հե-  
րոսամարտը. 1915 ապրիլ 7 - 1915 մայիս 7*, Պէ-  
րուք, 1965. Վան-Վասպուրականի հերոսամար-  
տը-75 (կազմեց՝ Յ. Փափազեանը), Երեւան,  
1990. տե՛ս նաեւ Յ. Մարութեան, *Վանի 1915 թ.  
հերոսամարտը. 80 տարի առաջ Վանի հա-  
յութիւնը վերջին անգամ բռնեց գաղթի ճամ-  
փան*, «Այժմ», թիւ 18 (112), 1998:
- 15 Ռուբինա Փիրումեան, *Հայ Դատ. տասնմէկե-  
րորդ դասարան (դասագիրք)*, Լոս Անձելըս,  
1994, էջ 38-39. տե՛ս նաեւ Ե. Փամպուրեան,  
*Ապրիլեան եղեռնը*.- Արշալիր Թիրակեան,  
*Կտակն էր նահատակներուն*, Երեւան, 1991, էջ  
45, 67:
- 16 Մանրամասն տե՛ս Ռուբինա Փիրումեան, *Ե-  
ղեռնը եւ բոլշեւիզմը*.- Հայոց ցեղասպանութիւն.  
պատճառներ եւ դասեր, Երեւան, մաս 3, 1995, էջ  
30-31:
- 17 Տե՛ս Ռ. Փիրումեան, *Ուր. աշխ., էջ 34. մանրա-  
մասն տե՛ս Հ. Սիմոնեան, Թուրք-հայկական յար-  
աբերութիւնների պատմութիւնից*, Երեւան,  
1991, էջ 369-415. Է. Զոհրաբեան, *1920 թ.  
թուրք-հայկական պատերազմը եւ տէրութիւն-  
ները*, Երեւան, 1997:

Զէնքով ու զինամթերքով աջակցութիւնը շարունակ-  
ուեց նաեւ 1921 թ.: Այս մասին տե՛ս **Դ. Ե. Երեմեօ**,  
*На стыке Азии и Европы* (очерки  
о Турции и турках), М., 1980, ст. 129.

- 18 Տե՛ս Ա. Եսայեան, *Հայաստանի միջազգային-ի-  
րաւական դրութիւնը (1920-1922 թթ.)*, Երեւան,  
1967, էջ 43. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ.  
VII, Երեւան, 1967, 127-129. Հ. Սիմոնեան, *Ուր.  
աշխ., էջ 403-404. Մ. Ներսիսեան, Բենալիական  
զօրքերի բարբարոսութիւնները Արեւելեան Հա-  
յաստանում 1920 թ. վերջին եւ 1921 թ. սկզբնե-  
րին*, ՊԲՀ, 1998, թիւ 1-2, էջ 247-256:
- 19 Յօդուածը ձեւակերպուած է հետեւեալ կերպ.  
«Երկու Պայմանաւորուող կողմերը համաձայն  
են, որ Նախիջեւանի մարզը սոյն Պայմանագրի  
1-ին յաւելումում նշուած սահմաններում կազ-  
մի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնա-  
մակալութեան ներքոյ՝ պայմանով, որ Ադրբե-  
ջանը սոյն խնամակալութիւնը չի զիջի մի եր-  
րորդ պետութեան»: Տե՛ս Հայաստանը միջազ-  
գային դիւանագիտութեան եւ սովետական ար-  
տաքին քաղաքականութեան փաստաթղթերում  
(1828-1923) (կազմողներ՝ Զ. Կիրակոսեան, Ռ.  
Սահակեան, խմբ.՝ Զ. Կիրակոսեան), Երեւան,  
1972, էջ 504: Յաջորդող տասնամակում Թուր-

- քիային յաջողուեց Իրանի հետ Արարատ լեռան  
շրջանում տարածքային փոխանակումների ճա-  
նապարհով մի անը շերտով անմիջական կապ  
հաստատել Նախիջեւանի հետ:
- 20 Տե՛ս Է. Զոհրաբեան, *Սովետական Ռուսաստա-  
նը եւ հայ-թուրքական յարաբերութիւնները  
1920-1922 թթ.*, Երեւան, 1979, էջ 219-236. Հ. Սի-  
մոնեան, *Ողբերգութեան պահին*, «Գարուն»,  
1989, թիւ 4, էջ 47-53. նոյն՝ *Թուրք-հայկական  
յարաբերութիւնների պատմութիւնից*, էջ 407-  
413:
- 1921 թ. մոսկովեան խորհրդա-թուրքական պայմա-  
նագրի գիտական տեսանկյունից գնահատելու  
հարցերին էր նուիրուած 1999 թ. մարտի 18-ին  
ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի եւ  
Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոնի  
կազմակերպած մէկօրեայ կոնֆերանսը: Տե՛ս  
«Գիտութիւն», թիւ 8-9 (138-139), 1999, էջ 5:
- 21 Տե՛ս Հ. Բարսեղեան, *Հայերէն ուղղագրական-  
ուղղախօսական տերմինաբանական բառա-  
րան*, Երեւան, 1973, էջ 108:
- 22 Մանրամասն տե՛ս Ի. Մոսեսովա, Ա. Յովհան-  
նեան, *Բարբոսի ջարդերը*, Երեւան, 1992
- 23 Ֆիդայի եւ ֆիդա արաբական ծագմամբ պարս-  
կերէն բառեր են. առաջինը նշանակում է «կորո-  
վի, քաջ», իսկ երկրորդը՝ «զոհ»: Տե՛ս Ա. Մալ-  
խասեանց, *Հայերէն բացատրական բառարան*,  
հտ. IV, Երեւան, 1945, էջ 625. տե՛ս նաեւ **Олим  
Сафуров**, *Имя и история: Об именах ара-  
бов, персов, таджиков и тюрков*, Словарь,  
М., 1987, ст. 201.

Ֆիդայական թեմատիկան, որպէս հայ ազգային-ա-  
զատագրական շարժման ամենապայծառ էջե-  
րից մէկը, լայնօրէն էր դիտարկուում դեռեւս 1989  
թ. հանրապետական մամուլի էջերում, իսկ  
Մշակույթի հայկական ֆոնդն անգամ ձեռնա-  
մուխ էր եղել հայ ֆիդայիների թան-  
ստեղծելու գործին: Տե՛ս *Հայ ֆիդայիների թան-  
գարան՝ համազգային ջանքերով (բաց նամակ  
մեր բոլոր հայրենակիցներին)*, «Գրական  
թերթ», թիւ 32 (2352), 1989:

- 24 Հայկ Աճեմեան, *Հայոց Հայրիկ. առաջին հա-  
տոր, Կենսագրութիւն*, Թարիգ, 1929, էջ 512-  
513:
- 25 Անդ, էջ 515. տե՛ս նաեւ Արշակ Մադոյեան,  
*Յակոբ Պետրոսեան, Գաղափարի եւ ազա-  
տութեան ջահակիրը*.- Նորմեան Հայրիկ, Եր-  
տուրեան ջահակիրը. Երեւան, 1992, էջ 5-18. Էմմա Կոստան-  
դեան, *Մկրտիչ խրիմեան: Հասարակական-քա-  
ղաքական գործունէութիւնը*, Երեւան, 2000, էջ  
266-267:

Ռ. Փիրումեանի գնահատմամբ, այն փաստը, որ Ա-  
ռաչին համաշխարհային պատերազմի սկզբին  
նուսական բանակին զինուորագրուած էին  
շուրջ 150 հազ. հայեր, կազմակերպուել էին  
նաեւ հայ կամաւորական զնդեր, վկայում էր, որ  
«... այս պատերազմին հայ ժողովուրդը այլեւս  
խնդրագիրներով չէր ներկայանար: Ան գտած

- էր խրիմեան Հայրիկի «երկաթէ շերտի» եւ իր  
մարտական ուժը ցոյց կու տար՝ իր պահանջնե-  
րը ստանալու համար»: Տե՛ս Ռ. Փիրումեան, *Ուր.  
աշխ., էջ 35:*
- 26 Հայրուկային (ֆիդայական) երգերի վերլու-  
ծութիւնը տե՛ս *Հայ ժողովրդական ռազմի եւ  
զինուորի երգեր*, էջ 28-40:
- 27 Անդ, էջ 105: Նկատենք, որ մինչ այս երգարա-  
նում լոյս տեսնելը երգն արդէն ունեցել է մի քա-  
նի հրատարակութիւն. տե՛ս *Հայ ժողովրդական  
ռազմի եւ զինուորի երգեր*, էջ 113, 291:

Այլվարդ Ղազիւեանի այս աշխատասիրած գրքում  
«Հայրուկային երգեր» բաժնում բերուած  
տեքստն ունի փոքր տարբերութիւններ Տ. Վար-  
ժապետեանի կազմած երգարանում (Բնար-  
գրականի նոր երգարան հասարէց Տիրան Վար-  
ժապետեանը, N. J., USA, 1918) տպագրուածից՝  
«չգանգատուենք»-ի փոխարէն բերուած է  
«չլանք» ձեռք, «թշմամիմ»-ի փոխարէն՝ «տանի-  
կը», «սովից»-ի փոխարէն՝ «մահից»:

- 28 Տե՛ս նաեւ Յ. Մարութեան, *Հայ պոեզիան...*, էջ  
294-296:
- 29 1989-1990 թթ. Հայոց համազգային շարժման  
տեղական կազմակերպութիւնները դեռեւս չու-  
նէին վառ արտայայտուած կուսակցական ուղ-  
ղութիւն, այլ իրատեսակ շարունակութիւն  
էին 1988 թ. ի վեր տեղերում գործող «Հարա-  
բալ կոմիտէների»:
- 30 Մանրամասն տե՛ս Յ. Մարութեան, *Մաղկե-  
պակը՝ որպէս ցուցաստատու (Յեղասպանու-  
թիւնը եւ հայ ինքնութեան պատկերագրութի-  
ւնը)*, «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 366-367:
- 31 Տե՛ս, օրինակ, Յովիկ Գրիգորեան, *Ահաբեկ-  
չութիւնը՝ որպէս ազգային-ազատագրական  
պայքարի ձեռն (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի  
պայքարի ձեռն)* (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի  
պայքարի ձեռն) Հայոց ցեղասպանութիւն. պատճառ-  
ներ եւ դասեր, մաս 2, Երեւան, 1995, էջ 39-72. Ա.  
Թիրակեան, *Ուր. աշխ.:*
- 32 Անգլերէն "Armenian Secret Army for the  
Liberation of Armenia", որի ASALA յայտարարումով  
էլ այն անվի լայնօրէն էր ժողովրդական լայն  
զանգուածներին:
- 33 Տե՛ս Արամ Մարոյեան, *Գորգէն Եանիկեանի  
դատավարութեան պատմականը*, Երեւան,  
1992, էջ 42:
- 34 Տե՛ս Գորգէն Եանիկեան, *Նպատակ եւ ճշմար-  
տութիւն*.- Յուշագրութիւն, Երեւան, 1999, էջ 8,  
13-19. Ա. Մարոյեան, *Ուր. աշխ., էջ 9, 205:*
- 35 Տե՛ս Գ. Եանիկեան, *Ուր. աշխ., էջ 9, 205:*
- 36 «Հայկական Նիւրնբերգ»-ի մասին տե՛ս Հայաս-  
տանի Առաջին հանրապետութեան կառավա-  
րութեան վերջին նախագահ Սիմոն Վրացեանի  
կարծիքը. «...Երկրորդ Համաշխարհային Պա-  
կարծիքը. համամասն պայմաններում,  
տերազմից յետոյ, համամասն պայմաններում,  
նացի շարդարարների համար միջազգային  
դատ կազմակերպուեց Նիւրնբերգում, նացի  
պարագլուխները մահապատիժի ենթարկեցան  
եւ գերման ժողովրդի վրայ տուգանք դրեց, իբ-  
եւ գերման ժողովրդի վրայ տուգանք դրեց, իբ-

րևի հատուցում հրեաներին, հանգստացնելու համար «քաղաքակիրթ մարդկության» վրդոված խիղճը: Տարբեր եղաւ նոյն այդ «քաղաքակիրթ մարդկության» վերաբերումը հայերի հանդէպ: Թուրքիայի հայության կէտը կոտորւեց ամենատարրի միջոցներով, միա կէտը հողմացրիւ եղաւ: Հայերի ստացուածքը յափշտակւեց: Գիւղեր ու քաղաքներ ամայացան: Եւ երբ հասաւ հատուցման ժամը, «քաղաքակիրթ մարդկութիւն»ն մնաց անտարբեր: Հայ ժողովուրդը ինքը, իր «քաջ որդւոց սուրբ արհմով»... կազմակերպեց հայկական Նիւրեմբերգ [ընդգծումն իմն է - Յ. Մ.] Թուրք դահիճների համար»: Տե՛ս Սիմոն Վրացեան, *Հայկական Նիւրեմբերգը*. Ա. Շիրակեան, Գ2. աշխ., էջ 76-77. հմմտ. Իվ Տերնոն, *Անպատժելիութիւն, վրէժ եւ ծխտում. հայկական ցեղասպանութիւնը միջազ-*

- գային ատեանների առջև*, ՊԲՀ, թիւ 1, 1999, էջ 123-129, թիւ 1, 2000, էջ 29-43:
- 37 Տե՛ս Սեդա Գպրանեան-Մելքոնեան, Մոնթե Մելքոնեան (կազմողներ), *Իրականութիւնը. ՀԱՀ ԳԲ.- Յեղափոխական շարժման փաստաթղթերը*, 1992, էջ 33. *7 օգոստոս - սոսն ուխտի եւ նահատակութեան.* - Երկաթէ շերեփ, թիւ 15, 1988, էջ 1. *Անմահ սիրանք.* - Երկաթէ շերեփ, թիւ 20, 1989, էջ 24. Սիլվա Կապուտիկեան, *Գիշերային ներվիւն*, «Գարուն», թիւ 11, 1987, էջ 16:
- 38 Տե՛ս Ս. Գպրանեան-Մելքոնեան, Մ. Մելքոնեան, Գ2. աշխ., էջ 46:
- 39 Աստուածաշունչ. Ելից գիրք, գլ. ԻԱ, 24:
- 40 Մանրամասն տե՛ս Յ. Մարութեան, *Հայ պոեզիան...*, էջ 289-290:




ճկ. 1



ճկ. 2



ճկ. 3



գլ. 4



գլ. 5



գլ. 6




գլ. 7



գլ. 8



գլ. 9



գլ. 10



գլ. 11



գլ. 12



գլ. 13



գլ. 14



գլ. 15



գլ. 16



գլ. 18



գլ. 17



գլ. 19



գկ. 20



գկ. 21



գկ. 22



գկ. 23



գլ. 24



գլ. 25



գլ. 26



գլ. 27



ԱԿ.28



ԱԿ.29

ՓԱՅՏԷ ԻՐԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ամալիա Սարգսեան

Փայտի մշակութիւնը հայոց մէջ հնագոյն արմատներ ունի: Հայկական լեռնաշխարհի մշակութային տարբեր շերտերից յայտնաբերուած յուշարձանները վկայում են, որ հնագոյն դարաշրջաններէ քարի հետ միասին փայտը մեծ կիրառութիւն է ունեցել նիւթական մշակութի տարբեր ոլորտներում:

Անտառը, ծառը, փայտը մարդկանց կեանքում չափազանց մեծ դեր են կատարել, եւ տակաւին խոր հնագարից ծիսապաշտամունքային որոշակի հաւատալիքներ են ձեւաւորուել բուսական աշխարհի, մասնաւորապէս՝ ծառերի նկատմամբ. ծառը պաշտուել է, սրբացուել: Բուսական աշխարհի, յատկապէս ծառապաշտութեան մասին յիշատակելով՝ Մովսէս Խորենացին նշել է, որ հնում Արմավիրում գտնուող սրբազան համարուող սօսի ծառերի տերեւների սօսափիւնով հայոց աշխարհում գուշակութիւններ են արուել<sup>1</sup>: «Սուրբ ծառերի», ինչպէս նաեւ «սրբազան պուրակների» պաշտամունքը Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական մարզերում ու հայաբնակ այլ վայրերում՝ այս կամ այն դրսեւորումներով պահպանուել է ընդհուպ XIX-XX դդ.<sup>2</sup>:

Ազգագրական նիւթի հաւաստմամբ, պայմանաւորուած բուսական աշխարհի, ինչպէս նաեւ երկրագործական, պտղաբերութեան, ընտանեկան-կենցաղային եւ այլ պաշտամունքով՝ հաւատալիքներ են ձեւաւորուել նաեւ փայտէ գանազան աշխատանքային գործիքների, կենցաղային նշանակութեան բազմաբնոյթ առարկաների հետ կապուած: Այդ առումով գանազան ծէսեր ու արարողութիւններ են ա-

րուել, որոնք կոչուած են եղել ապահովելու առատութիւն եւ յաջողութիւն, զերծ պահելու անյաջողութիւններից, վտանգից, չար ուժերի ու չար ոգիների ազդեցութիւնից<sup>3</sup>:

Երկրագործական պաշտամունքի հետ կապուած՝ առատ բերք ստանալու ակնկալիքով գանազան ծիսակատարութիւններ են արուել: Այսպէս, Մեծ Պասին երկրագործական գործիքներն ու սերմերն արհնել են տուել: Արօրը (որպէս ծիսական առարկայ) առաջին անգամ դաշտ դուրս բերելիս դատարկ ման է ածուել կամ մէկ-երկու ակօս անելուց յետոյ տուն բերուել՝ կրկնելով երկու-երեք օր<sup>4</sup>: Արօրը կիրառուել է նաեւ անձրեւաբեր համայնութեան արարողութիւններում: Այսպէս, երաշտի ժամանակ կանայք վարել են չորացած գետի հունը<sup>5</sup> երեւոյթ, որը նաեւ կովկասեան եւ այլ էթնօղորտներէ է նաեւ կովկասեան եւ այլ էթնօղորտներէ մէջ: Պտղաբերութեան նիւթի հանրոյթների մէջ: Պտղաբերութեան պաշտամունքի, նաեւ չարը խափանելու մտայնութեամբ պայմանաւորուած՝ համայնութեամբ պայմանաւորուած ծիսական այլ ծէսեր էլ են արուել հայոց մէջ: Դժուար ծննդաբերութեան ժամանակ արօրը բարձրացրել են ծննդկանի կտուր եւ մասերը միմեանցից անջատել ծննդաբերութիւնը դիւրացնելու ակնկալիքով<sup>6</sup>. սեռը փոխելու համար ծիսական տակով կինը պէտք է անցնէր արօրը ձեռքին, իսկ տղամարդը՝ ճախարակը<sup>7</sup>. Նոր տարուէ ընկոյզ կամ կաղին կտորելը լաւ է՝ արօր շատ կը կտորուի. նաեւ այդ օրը արօր շատ կը կտորուի լծողը այդ տարի արօր շատ կը կտորուի<sup>8</sup>: Արօրի լուծը կամ գոնէ սամինները փոշնի փայտից են պատրաստել՝ «չար ազդեցիկ» պահպանելու մտայնութեամբ, աչքից»